

կամ պետը, որ Հայ Եկեղեցւոյ սկզբունքներուն անվթար պահպանութեան համար կը պայքարէր իր բոլոր ուժով: Թէ ի՞նչ միջոցներ կիրարկեց իր գաղափարներուն յաղթանակը ապահովելու համար կեսաւրացիներու յատուկ յամառութեամբ ու կորովով օժտուած այս պայքարող եկեղեցականը, դժբախտաբար մեզի յայտնի չէ, սակայն յայտնի է թէ անիկա կարի խիստ ու դաժան եղած է իր հակառակորդներուն կամ անոնց դէմ որոնք օտարոտի գաղափարներու արձագանգ կ'ըլլային:

Իր բուն միջոցները ապահովաբար իր թշնամիները պէտք է գրգռած ըլլան իրենց կարելին ընելու որպէսզի զայն տապալին, անշուշտ օգտուելով ժամանակին յուզումնալից վիճակէն:

Արդարեւ հակառակ սովորական ցուցակներու, որ իր պաշտօնավարութիւնը կ'երկարեն մինչեւ 1610, Դարանաղցի գրուածներէն կ'երևայ թէ, ամբողջ Անատոլուն տակն ու վրայ ընող ձեւալիներու շփոթութեանց և սաստիկ սովին և մանաւանդ Անատոլուի բնակչութեան գունդ առ գունդ և ստուար բազմութեամբ դէպի մայրաքաղաք և շրջակայքը խուժած այդ շրջանին, այդ ընդհանուր յուզումներուն մէջ, ինչպէս կ'երևայ, Գրիգոր վրդ. կե-